Ք Ա Ղ Վ Ա Ծ Ք

ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի քարտուղարության կողմից 2022 թվականի առաջին կիսամյակի ընթացքում կատարած աշխատանքների վերաբերյալ հաշվետվությունից

Մարզպետը օրենսդրությամբ իրեն վերապահված լիազորությունների շրջանակում ապահովվել է ՀՀ օրենքների, Հանրապետության Նախագահի հրամանագրերի, ՀՀ կառավարության և վարչապետի որոշումների, ինչպես նաև այլ նորմատիվ իրավական ակտերի կատարումը: 2022 թվականի առաջին կիսամյակի ընթացքում մարզպետի կողմից ընդունվել է 151 որոշում, գլխավոր քարտուղարի կողմից արձակվել է 202 հրաման:Հաշվետու ժամանակաշրջանում անցկացվել է քաղաքացիական ծառայության թափուր պաշտոնների համալրման 5 մրցույթ:

Հաշվետու ժամանակաշրջանում <<Մալբրի>> համակարգում շրջանառվել է 15670 փաստաթուղթ, որից մտից՝ 5268, ելից՝ 4458, ներքին՝ 5944:

2022 թվականի առաջին կիսամյակի ընթացքում ՀՀ Նախագահի ու վարչապետի աշխատակազմից, ինչպես նաև հանրապետական գործադիր իշխանության մյուս մարմիններից ստացվել ու ՀՀ Վայոց ձորի մարզպետին է վերահասցեագրվել 11 դիմում:

2022 թվականին առաջին կիսամյակ ընթացքում ստացվել է 586 դիմում:

Հաշվետվություն

ՀՀ Վայոց ձոր մարզպետարանի քարտուղարության կողմից 2022թ-ի առաջին կիսամյակի ընթացքում կատարված աշխատանքների վերաբերյալ

Հաշվետու ժամանակաշրջանում աշխատակազմի քարտուղարության ընդհանուր բաժնում իրականացվել է ընդամենը 15.670 փաստաթղթաշրջանառություն, որից՝ 5.268 մտից, 4.458 ելից, 5.944 ներքին:

2022թ-ի առաջին կիսամյակում ստացվել է 586 դիմում:

ա/ Դրամական օգնություն է խնդրել 390 քաղաքացի: 302 քաղաքացու խնդրանք բավարարվել է, 70-ինը՝ մերժվել է, 18-ը ընթացքի մեջ է:

բ/ Բնակարանային և քաղաքաշինական հարցերով դիմել է 14 քաղաքացի, բոլոր 14 դիմումներին պատասխանվել է:

գ/ Առողջապահական բնույթի 2 դիմում է ստացվել , ստացված 2 դիմումներն էլ բավարարվել են:

դ/ Աշխատանքի հարցերով դիմել է 21 քաղաքացի, ստացված բոլոր դիմումներին տրվել է դրական ընթացք:

ե/ Գյուղատնտեսական հարցերով դիմել է 14 քաղաքացի, 14-ին տրվել է դրական պատասխան:

զ/ Կրթության և նախադպրոցական ուսումնական հաստատություններին առնչվող հարցերով դիմել է 10 քաղաքացի և ստացել են դրական պատասխան, 1 դիմում էլ ընթացքի մեջ է:

է/ Հողաշինության հարցերով դիմած քաղաքացիներից 9-ին էլ տրվել է դրական պատասխան:

ը/ Որդեգրման, մանկատնից երեխային վերադարձնելու և ներառական կրթության վկայագիր տրամադրելու հարցերով դիմել է 20 քաղաքացի և ստացել դրական պատասխան:

թ/ Ստացվել է այլ բնույթի 105 դիմում:

Քարտուղարության պետ՝ Հ. Ռուստամյան